Հայաստանում տեղական ժողովրդավարության և համայնքային ծառայություններից բավարարվածության համայնքների միջև համեմատական վերլուծություն

Արման ԳԱՍՊԱՐՅԱՆ

հետազոտող

CRRC-Armenia

info@crrc.am
(+374 10) 57 48 98, 57 48 68
1 Alex Manukyan Street, YSU Library building, 6th floor, room 602

Հետազոտական հարցեր

CRRC Armenia

- Արդյո՞ք խոշորացված համայնքների բնակիչներն ավելի բավարարված են իրենց համայնքների կողմից մատուցվող ծառայության որակից:
- Արդյո՞ք ուղղակի ժողովրդավարության միջոցով համայնքի ղեկավար ընտրող համայնքների բնակիչներն ավելի բավարարված են իրենց համայնքի աշխատանքից:
- Արդյո՞ք համայնքի չափսը դրականորեն կամ բացասականորեն է ազդում բնակիչների՝ համայնքների կողմից իրենց մատուցվող ծառայության որակից բավարարվածության վրա:
- Արդյո՞ք համայնքի բնակիչների թիվը դրականորեն կամ բացասականորեն է ազդում բնակիչների՝ համայնքների կողմից իրենց մատուցվող ծառայության որակից բավարարվածության վրա:
- Արդյո՞ք խոշորացված համայնքներում ավելի բարձր է տեղական ժողովրդավարության ընկալումը:
- Արդյո՞ք Երևանում ավելի բարձր է տեղական ժողովրդավարության ընկալումը:

Գրականության տեսություն

CRRC Armenia

- տեղական ինքնակառավարման մարմինները որպես որոշում կայացնող ստորաբաժանումներ՝ միտված ռեսուրսների բաշխմանը և մեծ թվով հանրային ծառայություններ մատուցմանը:
- համայնքների կողմից տրամադրվող ծառայությունների որակի ուսումնասիրություն՝ մեկ ծառայությունը որպես հիմք և փոխարինող (proxy) ընդունելով:
- որևիցե էական փոփոխականի (օրինակ՝ բնակչության քանակ կամ չափ)՝ հանրային ծառայությունների մատուցման արդյունավետության և որակի վրա ունեցած ազդեցության գնահատում:
- տարածքային բարեփոխումների (այդ թվում՝ խոշորացման) վերաբերյալ ուսումնասիրություններում տնտեսական փաստարկների ուժեղ գերիշխանություն՝ տեղական ժողովրդավարության հետ համեմատ
- ծախսերի և ծառայությունների մատուցման վրա ազդեցության քննարկումների գերակայություն՝ տեղական ժողովրդավարության վերաբերյալ պնդումների համեմատ

Տեղական ժողովրդավարության համաթիվ (Ladner, 2002)

CRRC Armenia

Համաթիվը բաղկացած է վեց պարամետրից

- Սոցիալական ինտեգրում
- Հետաքրքրվածություն
- Գիտելիք (քաղաքական)
- Վստահություն
- Բավարարվածություն
- Մասնակցություն

Տեղական ինքնակառավարման մոդելներ (Derlien, 1994)

CRRC Armenia

- Մոնիստիստական ընդդեմ դուալիստական իրավասության մոդել (Brîndusa, 2007)
- Միասնական ընդդեմ երկակի առաջադրանքի մոդել (Boggero, 2018)
- Քաղաքացիներին ընձեռնված ժողովրդավարական իրավունքների մակարդակից բխող տարբերություններ

Մեթոդի նկարագրություն. տվյալադարան, փոփոխականներ, վիճակագրական թեսթեր

CRRC Armenia

Որպես հետազոտության հիմք է ընդունվել «Հանրային մասնակացություն տեղական ինքնակառավարմանը (ՀաՄաՏեղ)» ծրագրի շրջանակներում 2015 և 2019 թվականներին իրականացված համապետական ներկայացուցչական հարցումները

Հետազոտոթյան շրջանակներում տվյալադարանը բաժանվել է երկու խմբի

- Առաջին խմբում ընդգրկվել են միայն այն փոփոխականները, որոնք ներառված են եղել երկու հարցման մեջ՝ 44 բնակավայր
- Երկրորդ խմբում պահպանվել են բոլոր փոփոխականները

Առաջին խմբի հետ իրականացվել է անկախ նմուշների թի-թեստ

Երկրորդ խմբի դեպքում իրականացվել է շեղման միակողմանի բազմաչափ վերլուծություն (Oneway Multivariate Analysis of Variance (MANOVA))

- Այս թեստի նշանակալիության դեպքում կախյալ փոփոխականներից յուրաքանչյուրի նկատմամբ իրականացվել է շեղման միակողմանի վերլուծություն (Analysis of Variance (ANOVA))

Անկախ փոփոխականներ

CRRC Armenia

Փոփոխական	Արժեքներ
Տարի	1 = 2015 2 = 2019
Համայնքի տիպը. գյուղական/քաղաքային	1 = Երևան 2 = Այլ քաղաքային համայնք 3 = Գյուղական համայնք
Համայնքի տիպը. խոշորացված/չխոշորացված	1 = Խոշորացված 2 = Չխոշորացված 3 = Այլ մեծ քաղաք

Անկախ փոփոխականներ

CRRC Armenia

Բնակչության թիվ		Զբաղեցրած տարածք	
1	1 – 499 քաղաքացի	1	1 – 4.9 կմ^2
2	500 – 999 քաղաքացի	2	5 – 9.9 կմ^2
3	1000 – 4999 քաղաքացի	3	10 – 19.9 կմ^2
4	5000 – 9999 քաղաքացի	4	20 – 49.9 կմ^2
5	10000 – 49999 քաղաքացի	5	50 – 99.9 կմ^2
6	50000 – 99999 քաղաքացի	6	100 + կմ^2
7	100000 + քաղաքացի		

Կախյալ փոփոխականների խմբեր

CRRC Armenia

Ըստ Լադների մոդելի՝

- Սոցիալական ինտեգրում
- Հետաքրքրվածություն (միայն 2015 թվականի հարցման մեջ)
- Գիտելիք (քաղաքական)
- Վստահություն
- Բավարարվածություն
- Մասնակցություն
- Թափանցիկություն
- Հաշվետվողականություն

Հիմնական արդյունքներ՝ 44 համայնքներ

CRRC Armenia

Փոփոխական	t-test արդյունք
ՏԻՄ-երը որքանո՞վ լավ կամ վատ են իրականացնում այս գործողությունները. Համայնքի մաքրության պահպանում	t (1233) = -4.714, p = .00, միջինների տարբերությունը = -.326
ՏԻՄ-երը որքանո՞վ լավ կամ վատ են իրականացնում այս գործողությունները. Կրթության, մշակույթի, սպորտի բնագավառների կառավարում	t (1100) = -3.155, p = .002, միջինների տարբերությունը = -.198
ՏԻՄ-երը որքանո՞վ լավ կամ վատ են իրականացնում այս գործողությունները. Սննդի կետերում առողջապահ. չափորոշիչների պահպանման վերահսկողություն	t (985) = -2.596, p = .01, միջինների տարբերությունը = -.182
ՏԻՄ-երը որքանո՞վ լավ կամ վատ են իրականացնում այս գործողությունները. Օրենքի և կարգի պահպանում	t (761) = -3.960, p = .00, միջինների տարբերությունը = -.284

Աղյուսակից երևում է, որ խոշորացումից հետո համայնքների կողմից այս ծառայությունների տրամադրումից գոհունակությունը նկատելիորեն նվազել է հարցված քաղաքացիների շրջանում:

Բնակչության թվի ազդեցությունը բավարարվածության վրա՝ 2015 թ.

CRRC Armenia



Բնակչության թվի ազդեցությունը բավարարվածության վրա՝ 2019 թ.

CRRC Armenia



Ծառայություններից գոհունակության վերլուծություն՝ խոշորացված և չխոշորացված համայնքների միջև

CRRC Armenia

ՓՈՓՈԽԱԿԱՆ	2015		2019	
	Խոշորացված	Չխոշորացված	Խոշորացված	Չխոշորացված
ՏԻՄ-երի գործունեության մասին համայնքի բնակիչների իրազեկում	2.61	2.34	2.35	2.73
Համայնքի բյուջեի մասին բնակիչների իրազեկում	2.21	2.08	2.09	2.31
Տեղական որոշումների կայացման գործընթացի մեջ բնակիչների ներգրավում	2.29	2.26	2.22	2.50
Տեղական պաշտոնյաների դեմ բողոքների կառավարում	2.32	2.16	2.35	2.45
Համայնքի եկամուտների արդար ու նպատակային օգտագործում	2.55	2.33	2.46	2.74
Բնակիչների հետ խորհրդակցություն՝ հանրային ռեսուրսների	2.53	2.26	2.32	2.57
Գնումների կատարման թափանցիկություն, օրինակ՝ մրցույթների կազմակերպում	2.50	2.26	2.32	2.55
Սոցիալական ծառայությունների մատուցում	2.66	2.44	2.53	2.73

Ծառայություններից գոհունակության վերլուծություն՝ խոշորացված և չխոշորացված համայնքների միջև

CRRC Armenia

Փոփոխական	2015		2019	
	Խոշորացված	Չխոշորացված	Խոշորացված	Չխոշորացված
Համայնքի մաքրության պահպանում	3.25	3.26	3.46	3.55
Կրթության, մշակույթի, սպորտի բնագավառների կառավարում	3.35	3.28	3.42	3.58
Տեղական ճանապարհների և կամուրջների պահպանում	2.74	2.81	2.48	2.77
Առողջապահական հաստատությունների կառավարում	3.11	3.06	2.86	3.13
Առևտրի կետերի գործունեության կանոնակարգերի պահպանման վերահսկողություն	3.12	3.09	3.03	3.31
Սննդի կետերում առողջապահ. չափորոշիչների պահպանման վերահսկողություն	3.00	2.88	3.00	3.17
Տեղական վեճերի լուծում	3.13	3.13	3.24	3.47
Ջրային ռեսուրսների և անտառների պահպանություն	2.98	2.85	3.11	3.20
Օրենքի և կարգի պահպանում	3.18	3.20	3.31	3.51
Տեղական հարկերի, տուրքերի, վճարների դրույքաչափերի սահմանում և գանձում	3.49	3.63	3.39	3.59

Բոլոր համայնքներ՝ սոցիալական ինտեգրում

CRRC Armenia

Փոփոխական	Չափումներ	Միջին
Իսկ նրանց մասնակցությունը լիարժե՞ք է. Երիտասարդներ	Խոշորացված	.71
	Չխոշորացված	.82
	Այլ քաղաք	.69
Իսկ նրանց լիարժեք մասնակցության համար առկա՞ են հնարավորություններ և մեխանիզմներ. Երիտասարդներ	Խոշորացված	2.15
	Չխոշորացված	2.29
	Այլ քաղաք	2.01
Այս խմբերը պե՞տք է լիարժեք մասնակցեն տեղական ինքնակառավարմանը. Կանայք	Խոշորացված	.94
	Չխոշորացված	.97
	Այլ քաղաք	.99
Իսկ նրանց մասնակցությունը լիարժե՞ք է. Կանայք	Խոշորացված	.59
	Չխոշորացված	.76
	Այլ քաղաք	.67
Իսկ նրանց լիարժեք մասնակցության համար առկա՞ են հնարավորություններ և մեխանիզմներ. Կանայք	Խոշորացված	2.05
	Չխոշորացված	2.28
	Այլ քաղաք	1.96
Իսկ նրանց մասնակցությունը լիարժե՞ք է. Հաշմանդամություն ունեցող մարդիկ	Խոշորացված	.45
	Չխոշորացված	.57
	Այլ քաղաք	.47
Իսկ նրանց լիարժեք մասնակցության համար առկա՞ են հնարավորություններ և մեխանիզմներ. Հաշմանդամություն ունեցող մարդիկ	Խոշորացված	1.6
	Չխոշորացված	1.85
	Այլ քաղաք	1.38
Իսկ նրանց մասնակցությունը լիարժե՞ք է. Աղքատ, սոցիալապես խոցելի մարդիկ	Խոշորացված	.47
	Չխոշորացված	.59
	Այլ քաղաք	.49
Իսկ նրանց լիարժեք մասնակցության համար առկա՞ են հնարավորություններ և մեխանիզմներ. Աղքատ, սոցիալապես խոցելի մարդիկ	Խոշորացված	1.67
	Չխոշորացված	2.07
	Այլ քաղաք	1.61
Իսկ նրանց մասնակցությունը լիարժե՞ք է. Փախստականներ	Խոշորացված	.46
	Չխոշորացված	.58
	Այլ քաղաք	.44
Իսկ նրանց լիարժեք մասնակցության համար առկա՞ են հնարավորություններ և մեխանիզմներ. Փախստականներ	Խոշորացված	1.74
	Չխոշորացված	2.02
	Այլ քաղաք	1.49

Բոլոր համայնքներ՝ սոցիալական ինտեգրում

CRRC Armenia

Փոփոխական	Չափումներ	Միջին
Այս խմբերը պե՞տք է լիարժեք մասնակցեն տեղական ինքնակառավարմանը. Կանայք	Երևան	.97
	Այլ քաղաքային համայնք	.99
	Գյուղական համայնք	.98
Իսկ նրանց լիարժեք մասնակցության համար առկա՞ են հնարավորություններ և մեխանիզմներ. Հաշմանդամություն ունեցող մարդիկ	Երևան	1.4
	Այլ քաղաքային համայնք	1.66
	Գյուղական համայնք	1.76
Իսկ նրանց լիարժեք մասնակցության համար առկա՞ են հնարավորություններ և մեխանիզմներ. Փախստականներ	Երևան	.9
	Այլ քաղաքային համայնք	.94
	Գյուղական համայնք	.94

Բոլոր համայնքներ՝ գիտելիք

CRRC Armenia

Փոփոխական	Չափումներ	Միջին
Ձեր համայնքի ավագանու անդամներից քանիսի՞ն եք ճանաչում:	Խոշորացված	2.09
	Չխոշորացված	2.31
	Այլ քաղաք	.61
Ձեր համայնքի ղեկավարն ունի՞ իրեն կից խորհրդակցական մարմին(ներ):	Խոշորացված	.59
	Չխոշորացված	.65
	Այլ քաղաք	.91
Գիտե՞ք արդյոք՝ ուր են ՏԻՄ-երն ուղղում տեղական հարկերից, տուրքերից, վճարներից, տույժ-տուգանքներից ստացված եկամուտները:	Խոշորացված	.3
	Չխոշորացված	.34
	Այլ քաղաք	.51

Բոլոր համայնքներ՝ գիտելիք

CRRC Armenia

Փոփոխական	Չափումներ	Միջին
Ձեր համայնքի ավագանու անդամներից քանիսի՞ն եք ճանաչում:	Երևան	.49
	Այլ քաղաքային համայնք	1.5
	Գյուղական համայնք	2.55
Ձեր համայնքի ղեկավարն ունի՞ իրեն կից խորհրդակցական մարմին(ներ):	Երևան	.91
	Այլ քաղաքային համայնք	.72
	Գյուղական համայնք	.60
Գիտե՞ք արդյոք՝ ուր են ՏԻՄ-երն ուղղում տեղական հարկերից, տուրքերից, վճարներից, տույժ-տուգանքներից ստացված եկամուտները:	Երևան	.5
	Այլ քաղաքային համայնք	.39
	Գյուղական համայնք	.31
Գիտե՞ք, թե ՏԻՄ-երի կողմից ինչպես են սահմանվում տեղական հարկերի, տուրքերի, վճարների, տույժ-տուգանքների դրույքաչափերը:	Երևան	.1
	Այլ քաղաքային համայնք	.06
	Գյուղական համայնք	.18

«Վստահություն»,

«Բավարարվածություն»,

«Մասնակցություն»,

«Թափանցիկություն»

«Հաշվետվողականություն»

ենթախմբերի արդյունքները նշանակալի չեն եղել

Արդյունքներ

CRRC Armenia

Խոշորացված համայնքներում տեղի է ունեցել մատուցվող ծառայություններից բավարարվածության նկատելի անկում և ակնհայտ են դրական միտումները չխոշորացված համայնքների և բացասական միտումները՝ խոշորացվածների դեպքում:

- Խոշորացված համայնքներում 18 ծառայությունից բավարարվածության միջին ցուցանիշը 2019 թվականին՝ 2015-ի համեմատ, աճել է 6-ի դեպքում, 11-ի դեպքում տեղի է ունեցել անկում, իսկ 1-ի դեպքում փոփոխություն չի գրանցվել:

- Չխոշորացվածներ համայնքներում ծառայությունների մատուցման որակից միջին բավարարվածության աճ նկատվել է 16-ի դեպքում, և միայն 2-ի դեպքում է տեղի ունեցել անկում:

Տեղական ժողովրդավարության տեսանկյունից լավագույն իրավիճակը չխոշորացված գյուղական համայնքներում է:

Առաջարկներ քաղաքականություն իրականացնողներին

CRRC Armenia

- Վերագնահատել խոշորացման գործընթացի հաջողվածությունը:
- Իրականացնել խոշորացված համայնքներում տրամադրվող ծառայությունների մատուցման որակի և տեղական ժողովրդավարության համապարփակ գնահատում:
- Խրախուսել արդեն իսկ խոշորացված համայնքներում խոշորացման գործընթացի շարունակականությունը՝ այդպիսի համայնքներին տրամադրելով հավելյալ լիազորություն և ինքնավարություն:
- Ընդլայնելով համայնքի ղեկավարի լիազորությունները, որով հիմքեր կստեղծվեն համայնքի կարողությունների զարգացման համար, կխթանվի ժողովրդավարական ապակենտրոնացումը և կապահովվի տարածքային համաչափ զարգացում:
- Ակտիվորեն համագործակցել համայնքային դպրոցների, մարզպետարանների և ԿԳՄՍ նախարարության հետ, ինչպես նաև համապատասխան փոփոխություններ կատարել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի հոդվածներ 11 և 16-ում ՝ նախաձեռնելով ավագ դպրոցների աշակերտների պարբերական մասնակցություն ավագանու նիստերին և համայնքի ղեկավարի կողմից կազմակերպվող քննարկումներին, և խրախուսելով անչափահաս բնակիչների կողմից ավագանու նիստերին և համայնքի ղեկավարին առաջարկություններ ներկայացնելը:
- Ստեղծել հնարավորություններ մինչև 5000 բնակիչ ունեցող համայնքներում ուղիղ ժողովրդավարության, իսկ մինչև 50000 բնակիչ ունեցողներում՝ խորհրդակցական ժողովրդավարության ատրիբուտների կիրառման համար՝ օրենքում ամրագրելով նման մեխանիզմներով որոշումների ընդունման քվոտաներ:

Առաջարկներ ոլորտային հետազոտողներին

CRRC Armenia

- «ՀաՄաՏեղ» ծրագրի շրջանակներում իրականացված հարցմանը նույնանման ևս մեկ հարցում իրականացնել 2023-2025 թվականների ընթացքում, ինչը թույլ կտա ճշգրիտ գնահատել խոշորացման գործընթացի արդյունքները, համեմատել այդ արդյունքները տարբեր փուլերում խոշորացված համայնքների միջև:

- Իրականացնել բազմակողմանի և միջառարկայական վերլուծություն հանրապետության խոշոր քաղաքներում տեղական ինքնակառավարման վերաբերյալ՝ փորձելով հհետազոտությամբասկանալ տվյալ վեր հանված խնդիրների պատճառները և առաջարկելով դրանց լուծման ուղիներ:

CRRC Armenia

Սույն հետազոտությունը կատարվել է Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության միջոցով: Այստեղ արտահայտված տեսակետները /կամ նյութի բովանդակությունը/ միմիայն հեղինակներինն են և պարտադիր չէ, որ արտահայտեն ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

CRRC Armenia

Շնորհակալություն